

Ձավախքում արտաքուստ հանգիստ է

ԱԽԱԼՔԱԼԱՔ, 11 ՕԳՈՍՏՈՍԻ, Ա-ԻՆՖՈ. Չնայած ընթանում է Վրաց-Օսական պատերազմը, սակայն իրադրությունը Սամցխե-Ձավախք տարաշածրջանում հանգիստ է:

Չորակոչի ենթակա երիտասարդներին արգելված է դուրս գալ Վրաստանի սահմաններից:

Մեր ունեցած ոչ պաշտոնական տեղեկությունների համաձայն, մինչ օրս Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջաններից պատերազմական գոտի են գնացել 12 հայ ոստիականներ. իսկ Ասպինձայի եւ Ախալցխայի շրջանների գրեթե բոլոր ոստիկանները տեղափոխվել են Թբիլիսի:

Խուճապ է նկատվում Կարս-Ախալքալաք երկաթուղու ազգությամբ թուրք մասնագետների եւ շինարարների մոտ: Օգոստոսի 10-ին, վաղ առավոտից սկսած նրանք տեխնիկայով հանդերձ դուրս եկան տարածաշրջանից եւ ուղեւորվեցին դեպի Թուրքիա:

Բաքու- Ձեյհան նավթամուղու Ծալկա-Բորժոմի հատվածը վերահսկում են հատուկ ջոկատայինները:

Ձավախքի հայ բնակչությունը չնայած արտաքուստ հանգիստ է, սակայն բնագոյաբար մթերք է գնում կուտակում: Այդ պատճառով նկատվում է ապրանքների գների թանկացում:

-0-

20080811-ա

>>>>

© Copyright A-INFO Հղումը «Ա-ԻՆՖՈ»-ին պարտադիր է
<http://www.a-info.org>